
ՌՈՒԲԵՐՏ ԶԱՎԵՆԻ ԱՎԱԳՅԱՆ



Կյանքից անժամանակ հեռացավ անվանի իրավագետ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, պրոֆեսոր Ռոբերտ Զավենի Ավագյանը (ծնվ. 1939 թ., 12 հունիսի, Երևան):

Դժվար ու ծանր է եղել նրա մանկությունը: Երկու տարեկան էր, երբ հայրը կամավոր մեկնել է Հայրենական մեծ պատերազմ և չի վերադարձել:

1957 թ. Ռ. Ավագյանը, ավարտելով Մոսկվայի անվան միջնակարգ դպրոցը, ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ: Արդեն ուսանողական տարիներից նա աչքի է ընկել գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակությամբ և ակտիվորեն մասնակցել իրավագիտության գծով համամիութենական ուսանողական գիտաժողովների (Մոսկվայում)՝ հանդես գալով քրեական իրավունքին նվիրված ուշագրավ զեկուցումներով:

1962 թ., հաջողությամբ ավարտելով ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը, խոստումնալից երիտասարդն աշխատանքի է նշանակվել ՀԽՍՀ Գերագույն դատարանում՝ որպես օրենսդրությունը համակարգող ավագ խորհրդատու և աշխատել մինչև 1965 թ.:

1965-2011 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում, սկզբում որպես կրտսեր, իսկ 1972 թվականից՝ ավագ գիտաշխատող:

1972 թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ «Доведение до самоубийства и его предупреждение» («Ինքնասպանության հասցնելը և դրա կանխարգելումը») թեմայով, որն աննախադեպ ու համարձակ փորձ էր ողջ Խորհրդային Միությունում՝ իրավագիտական ասպարեզում:

Որպես գիտության հմուտ կազմակերպիչ՝ Ռ. Ավագյանը 1981-1991 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետության և իրավունքի բաժնի վարիչ, 1992-2003 թթ.՝ Պետախրավական հետազոտությունների բաժնի վարիչի տեղակալ, իսկ 2004-2005 թթ.՝ փոխտնօրեն:

1983-1991 թթ. Ռ. Ավագյանը նախագահել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի «Դատադատախազա-քննչական» մասնագիտության գծով ավարտական Պետական քննական հանձնաժողովը: Նա եղել է նաև «Հայկական Սովետական Հանրագիտարանի» գիտաճյուղային խորհրդի անդամ, «Հայկական Համառոտ Հանրագիտարանի»՝ իրավագիտության գծով գիտական խորհրդատու, «Օրենք և իրականություն» հանդեսի գիտական խմբագրական խորհրդի նախագահ:

Ճկուն տրամաբանության տեր գիտնականը նաև հարգված ու սիրված մանկավարժ էր: 1990-ից դասախոսել է Երևանի Արտաքին տնտեսական կապերի համալսարանում, իսկ 1995

թվականից նաև՝ Մոսկվայի Նոր իրավաբանական ինստիտուտում: Դասախոսել է նաև Ռուս-հայկական (Մլավո-նական) պետական համալսարանում, 2002-2003 թթ. նույն համալսարանի հանրային իրավունքի ամբիոնի վարիչն էր: Միաժամանակ, 2000-2003 թթ. եղել է Մոսկվայի Սերվիսի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի իրավագիտության ամբիոնի վարիչ:

Օրենքն ու պետական շահը ամեն ինչից վեր դասող հմուտ ու բանիմաց իրավագետը 1995-2007 թթ. եղել է ՀՀ Արդարադատության խորհրդի անդամ, 1999-2011 թթ.՝ ՀՀ դատախազության մարմինների աշխատակիցների որակավորման հանձնաժողովի անդամ, ինչպես նաև՝ ՀՀ նախագահի՝ 2008 թ. հոկտեմբերի 23-ի «Փորձագետների փաստահավաք խմբի ստեղծման և նրա գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» կարգադրությամբ ստեղծված Փաստահավաք խմբում նշանակվել է որպես փորձագետ:

Մասնակցել է հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովների (1982 թ.՝ Գերմանիայում, 1986 թ.՝ ԱՄՆ-ում և Կանադայում):

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են բազմաթիվ ատենախոսություններ: Խմբագրվել և գրախոսվել են ավելի քան 50 աշխատություն:

Իրավագետ Ռ. Ավագյանը հեղինակ է քրեական իրավունքի և քրեաբանության արդիական խնդիրներին նվիրված հարյուրավոր գիտական հրապարակումների, այդ թվում՝ 17 գրքի:

Նրա աշխատությունները նոր խոսք են քրեական իրավունքի տեսության մեջ և զգալի գործնական նշանակություն ունեն իրավակիրառ պրակտիկայի արդյունավետությունը բարձրացնելու գործում: Դրանք են. *Доведение до самоубийства как уголовно наказуемое деяние* (Ե., 1971) [Ինքնասպանության հասցնելը որպես քրեորեն պատժելի արարք], *История государства и права Советской Армении* (Книга I и II, Ե., 1974 и 1978 гг., в соавторстве) [Սովետական Հայաստանի պետության և իրավունքի պատմություն], *Загрязнение природной среды как уголовно наказуемое деяние* (Ե., 1975), *Բնության իրավական պահպանությունը Հայկական ՍՍՀ-ում* (Ե., 1979), *Սոցիալիզմը և մարդու իրավունքները* (Ե., 1980, համահեղինակությամբ), *Местные Советы и предотвращение загрязнения природной среды* (Ե., 1982), *Հայաստանի Հանրապետության արդի քրեական իրավունքը* (Ե., 1995), *Հանցավորությունը Հայաստանի Առաջին հանրապետությունում (1918-1920 թթ.)* (Ե., 1995), *Հանցավորությունը Հայաստանում* (Ե., 1997), *Հանուն օրինականության* (Ե., 2002), *Մեանա լճի իրավական պաշտպանությունը* (Ե., 2003), *Մարդու իրավունքներ. Քրեաիրավական երաշխիքներ* (Ե., 2007), *Доведение до самоубийства как состав деяния* (Ե., 2010, в соавторстве), *Արդարադատության հարցեր* (Ե., 2010): Ռ. Ավագյանի բանիմաց թարգմանությամբ լույս է տեսել Հայաստանի Քրեական օրենսգիրքը ռուսերեն՝ *Уголовный Кодекс Республики Армения* (перевод с армянского, СПб., 2004):

Ճանաչված գիտնականը 1999 թ. ընտրվել է Ռուսաստանի Դաշնության Հումանիտար գիտությունների ակադեմիայի (Մոսկվա) թղթակից անդամ, Էկոլոգիայի ու կենսագործունեության անվտանգության միջազգային գիտությունների ակադեմիայի (Մանկտ Պետերբուրգ) ակադեմիկոս:

Ռոբերտ Ավագյանը Հայկական ՄՍՀ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության կողմից պարգևատրվել է «1975 թ. Սոցիալիստական աշխատանքի հաղթող» շքանշանով (1976 թ.) և արժանացել «Գովեստագրի» (1983 թ.): Մոսկվայի Նոր իրավաբանական ինստիտուտի կողմից արժանացել է «Օրենքի թագավորություն» (2003 թ.) շքանշանի և «Ոսկե մեդալի» (2007 թ.): Պարգևատրվել է նաև ՀՀ Գլխավոր դատախազության «Շնորհակալագրով» և «Ոսկե գրիչով» (2009 թ.):

Վաստակաշատ իրավագետի, քաղաքացու, հոգատար ընկերոջ ու բարեկամի հիշատակը միշտ կմնա նրան ճանաչողների սրտերում:

**ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժին**